ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

գ. Փարաքար **03/06/2024թ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Օնիկ Ախվերդյանը, Լիանա Գասպարյանը, Վալոդյա Գրիգորյանը, Նելլի Եսայանը, Ռուդիկ Զեյնալյանը, Էմմա Թորոսյանը, Մանուկ Ղազարյանը, Հովհաննես Մխիթարյանը, Հայկազ Սարգսյանը, Ավետիս Ֆարֆարյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ ազգային ժողովի պատգամավորներ, Արմավիրի մարզպետ պարոն Խուդաթյանը, մարզպետի խորհրդականները, Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն սրբազանը, Փարաքար գյուղի եկեղեցու հոգևոր այրերը, մշակույթի և արվեստի ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ, լրատվական բնագավառի աշխատակիցներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Լյուդվիգ Գյուլնազարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 3-ի օրենքի ուժով հրավիրված նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից համայնքի բնակիչներին տրվող երդում. «Ստանձնելով Փարաքար համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ. Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների: Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

2. Բնակիչներին տրված երդմամբ Փարաքար համայնքի ղեկավար Լյուդվիգ Արիստակեսի Գյուլնազարյանը համարվում է լիազորությունները ստանձնած:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ

/ՁԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով. Փարաքարի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի հաջորդ հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի հունիսի 14-ը, ժամը 12:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 պՁեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Համայնքի ղեկավար՝

ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գայանե Մանուկյանը _____